



✱ ✱

Յամաք յարդին վերայ պառկած
Թշուառ Մրտօն, դեռ կը քնէ.

Երկու օր է, չէ կերել հաց.

Ինչ ճար անէ. ուստի՞ ճարէ.

Վեր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ.

Քիւրտը էլ կը գայ, քեզ կը թալնէ:

Քոյ աղքատիկ, մերկ յարկին տակ,
Թէպէտ սո՞ղն է, միայն քոյ բաժին,

Սակայն ունիս դեռ մի հրեշտակ,

Քոյ լաջ սիրուն. քոյ ամուսին.

Վեր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ.

Քիւրտը կը գայ, նրան կը տանէ:

Արդէն մեռան սոված, քաղցած,

Երբու քնքուշ քոյ զաւակներ,

Նրանց դիակունը, դեռ չեն թաղուած,

Խեղճ Մայրերնին մօտն է պահեր.

Վեր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ.

Քիւրտը թէ՛ գայ, քեզ կ'անպատուէ:

Այն բուպէին, քիչ հեռուից

Ձիաների ոտնաձայնը,

Վեր թուց խեղճ մայրն իւր տեղից

Որ զարթեցնէ քնած մարդը.

Վեր կաց Մրտօ՛. էլ մի՛ քնէ,

Քիւրտը եկաւ՝ որ մեզ թալնէ:

Վեր կաց, արեւ հոգի՛ իմ ջան,

Պաշտպանի՛ր ինձ, տես մօտեցան.

Թշնամին գտաւ՝ մեր տան ճամբան,

Վեր կաց, զտի՛ր քոյ հրացան.

Չարթի՛ր Մրտօ. էլ մի՛ քնէ,

Ահա՛ Քիւրտը մեզ մահ բերէ:

Լըսի՛ր գիւղի շըներն հաջին,

Խարխուլ դռներն կը կուտարտին,

Լըսի՛ր ինչպէ՛ս մահ կը գոչեն.

Սեւ օրն հասաւ, լոյս է արդէն.

Վեր կաց Մրտօ, զարթի՛ր ժամ է.

Էլ ինձ աշատեղ դու չես գտնէ:

Նայ պինդ բռնեց մարդու ձեռքից,

Ուժով թոթուեց, որ վեր կենայ,

Սակայն սառած, ցնցուեց ահից,

Արդէն սովից մեռած էր նայ:

Վեր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ.

Քիւրտը եկաւ, որ քեզ թողնէ:

Քիւրտն էլ հասաւ, ու ներս մտաւ,

Երեք անշունչ դիակաց հետ.

Կիսամեռ զողտը, մի կին գտաւ:

Շալակն առած, տարաւ իւր հետ.

Թէ, խեղճ Մրտօն խոր քնոյ մէջ է,

Արդեօք կրնն ո՞վ կը պաշտպանէ:

Պ. ԱԴԱՄԵԱՆ

Թիֆլիս 1882. 14 Յունիլ.

Ք Ա Ջ Ա Լ Ե Ր

✱

Յոյսըդ մի՛ կտրիր, դու իմ Հայ եղբայր,

Ապագան քեզի արդ ծիծաղում է.

Հասար քոյ վշտաց հանապարհին ծայր,

Տըւի՛ր քոյ լուսան, ու՛մ որ, որ հարկ է.

Գիտե՛ս թէ՛ ու՛մ վրայ՝ պէտք է յոյս դնել,

Ու՛մ պէտք է դրամ, օգնութիւն հասցնել,

Դէպի լոյս աշխարհ, դու մի՛ քալ առիւր,

Քեզ համար բարիք դու սերմանեցիր:

Եւ շատ եմ տեսել հանդէսներ ուրախ,

Պար ե խնջոյքներ, գինեբրուք ե խաղ,

Այս հանդիսիս մօտ նոցա մթազնին,

Այստեղ օգնում է Հայն իւր սերունդին:

Երանի՛ ազգին, որ իմանում է,

Թէ՛ իւր յոյս, պարծանք, իւր հօրսերունդն է.

Երանի՛, որ Հայ աղքատ մանկտեաց

Չեղք կը կառկառէ, ուսուցն տայ ե հաց:

Այժմ կարող էջ դուք ուրախանալ,

Չեր արածովը սրտով պարծենալ.

Թէ՛ այսպէս ձեր սիրտն, ու քալ բաց է,

Ապագայ Հայր ապահովուած է:

Պ. ԱԴԱՄԵԱՆ